

	Ստուգում		Փ օ ր ձ	
	Սկզբնական գինը մինչև մաքրացումը	Մաքրացումից հետո (ծախս)	Սկզբնական գինը մինչև կոնցենտրատ, մինչև մաքրացումը	Մաքրացումից հետո (ծախս)
Սպիրտ % -ով	19,3	17,1	18,6	
Շաքար % -ով	3,0	2,6	3,0	2,3
Տիտրացվող թթուներ գ/լ	3,7	7,3	4,2	8,6
Ցնդող թթուներ գ/լ	1,0	2,3	1,4	1,9
Ալդեհիդներ մգ/լ	35,1	40,2	35,1	39,3
Ացետալներ մ/լ	6,9	54,0	6,7	58,9
Էքստրակտ գ/լ	45,8	63,3	51,8	60,1
Դարաղման նյութեր գ/լ	0,50	0,63	0,71	0,86
Պոլիֆենոլներ մգ/լ	70,7	147,6	99,6	185,2
Պերօքսիդներ մգ/լ	—	1,55	—	2,4
Դեգուտացիոն գնահատական	—	8,05	—	8,16

Նոր մեթոդի էֆեկտիվությունը կայանում է հետևյալում.

1. Մաղերային խցում գինենյութի պահպանման ժամկետը կրճատվում է 9-ից մինչև 6 ամիս, այսինքն՝ 34 %-ով:

2. Գինենյութերի կորուստները նվազում են 18 %-ից մինչև 12%: Երևանի գինու կոմբինատում կորուստները 3200 դիլ-ի փոխարեն կկազմեն 2200 դիլ: Գինենյութերի տնտեսումը մեկ շրջապտույտում կազմում է 1100 դիլ, երկու շրջապտույտում, համապատասխանորեն՝ 2200 դիլ:

3. Մաղերացման ժամկետի կրճատման կապակցությամբ հնարավորություն է ստեղծվում բարձրացնել մաղերային խուցերի արտադրողա-

կանությունը և ապահովել տարեկան երկու անգամ պատրաստի նյութերի հանումը:

4. Էքստրակտների ավելացումը համի ու հոտի տեսակետից նյութը դարձնում է ավելի ուժեղ. բարձրանում է տիտրացվող թթվայնությունը, բարելավվում է մաղերայի որակը: Հավասար պայմաններում կոնցենտրատով մաղերայնությունը կուպաժելիս, կարելի է ավելի քիչ քանակությամբ մաղերա օգտագործել և ավելացնել մաղերայի արտադրությունը: Արհեստական բարձրացումը թույլ կտա օգտագործել գինեգործության հյուսիսային շրջանների քիչ էքստրակտիվ գինիները:

5. Նոր մեթոդի կիրառումից առաջացող տնտեսումը, դրամական արտահայտությամբ, միայն երևանի գինու կոմբինատում, կկազմի տարեկան մոտ 166 հազ. ռուբլի:

6. Հնարավորություններ են բացվում օգտագործելու կոնյակային դիրտի օգտագործման համար: Դիրտը մինչև հիմա անօգտագործելի է մնում և անդառնալիորեն կորչում է:

Գ Ր Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Преображенский А. А. и Берг В. А. Производство мадеры в герметической таре. Садоводство, виноградарство и виноделие Молдавии, № 3, 1958.

2. Агабальянц Г. Г. Новая технологическая схема приготовления мадеры. Материалы научно-технической конференции работников винодельческой промышленности и НТО Пищевой промышленности, 1957.

3. Герасимов М. А. Технология виноделия, 485 стр., 1952.

4. Казумов Н. Б. Научные основы технологии мадеры. На правах рукописи.

ԿՈՎԻ ԿԱՇՎԻ ԵՎ ԽՈՋԻ ԽՐՈՄԻ ԵՐԿՑԱԶ ԴԱԲԱՂՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևանի կաշվի գործարանի գլխավոր ինժեներ

Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հայկ. ՍՍՌ Միևիստրների Սովետի ՊԳՏԿ-ի ավագ գիտական աշխատող

Հայտնի է, որ խրոմային դաբաղման ջերմաստիճանի բարձրացումը ոչ միայն առաջ է բերում փոխազդեցության պրոցեսի արագացում, այլև դաբաղման միացություն լրացուցիչ ամրա-

ցում: Այդ մասին են վկայում լերկ մորթու՝ միջոցով քրոմի ամրացման վրա քրոմատիզատի

1 Լերկ մորթի, որից մազն ու փառը հեռացված են (голье).

լուծույթի շերմաստիճանի գործած ազդեցության տվյալները:

Աղյուսակ 1

Լերի մաքուր միացույթի ֆոսֆորի ամրացման վրա ֆոսֆատ-ֆատի լուծույթի շերմաստիճանի գործած ազդեցությունը

Դաբաղման աղի բաղադրությունը	Հիմքային լուծույթի % -ով	Cr ₂ O ₃ -ի կոնցենտրացիան % -ով	Դաբաղման ջերմաստիճանը °C	Ամրացված քրոմի պարունակությունը սպիտակուցի կշռի % -ով	Փրակ-հիմքի քիմիական բաղադրությունը
Cr ₂ (OH) ₂ (SO ₄) ₂	35	20	4	7,8	66
Na ₂ SO ₄	35	20	20	10,4	61
"	35	20	40	11,9	53
"	47	20	4	11,4	60
Քրոմի սուլֆատ	47	20	20	13,0	47
"	47	20	40	14,5	45
"	47	120	4	8,9	60

1-ին աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ փոխազդեցության շերմաստիճանի բարձրացման հետևանքով խրոմային միացությունների բաղադրությունը, որոնք ամրացվել են կոլլազենով¹, փոփոխվում է և դառնում ավելի քիչ թթվեցրած (1): Այդ օրինաչափությունը օգտագործվել է Երևանի կաշվի գործարանում, կովի կաշվի և խոզի խրոմի մասնակի կոշտությունը վերացնելու համար:

1957 թ. գործարանում արմատավորվել է կովի կաշվի և խոզի խրոմի դաբաղման երկֆազային մեթոդը՝ երկրորդ ֆազի դաբաղման բարձր շերմաստիճանով:

Այս դեպքում պատրաստի ապրանքում խրոմի օքսիդի պարունակությունը բարձրացել է, և լիովին վերացվել է կոշտությունը: Կաշին դարձել է լիքը, հագեցած, և այդ մեթոդի դեպքում քրոմի օքսիդի ծախսը չի ավելացել:


Կովի կաշվի և խոզի խրոմի երկֆազ դաբաղման մեթոդիկան, որն ընդունվել է Երևանի կաշվի գործարանում, կայանում է հետևյալով.

Պիկելացումը² վերջացնելուց հետո պիկելային հեղուկի մի մասը դուրս են թափում, այն հաշ-

վով, որպեսզի քրոմի էքստրակտ ավելացնելուց հետո պահպանվի հեղուկային գործակիցը՝ 0,8—0,6 մեծությամբ:

Այնուհետև, ընթացքի ժամանակ, սնամեջ առանցքի միջով թմբուկի մեջ դանդաղորեն, երկու անգամ լցնում են քրոմի էքստրակտ 32—35 % հիմքայինությամբ, քրոմի օքսիդի 1%-ի հաշվով, նայած լերկ մորթու կշռին:

4—6 ժամ հետո կատարվում է կաշվի եռացման շերմաստիճանի որոշումը: Երբ կաշին դիմա-



Նկ. 1.

նում է եռացման 90° շերմաստիճանին, այն դուրս են հանում թմբուկից: Եռացման շերմաստիճանը պետք է լինի առնվազն 90°C, քանի որ դա համապատասխանում է խրոմի կտորին ըստանդարտով ներկայացվող պահանջներին: Այնուհետև կաշին ճմլում են, ռան-

դում (строгание), տեսակավորում և կոմպլեկտավորում են արտադրական խմբերում սահմանված նպատակի համար: Կոմպլեկտավորված խումբը կշռում են, որոշում են ռանդման կշիռը, իսկ այնուհետև լցնում են թմբուկի մեջ, ավելացնում են կերակրի աղ 2%-ի հաշվով և թմբուկի ընթացքի ժամանակ լցնում են քրոմի էքստրակտ 40—42 % հիմքայինությամբ, քրոմի օքսիդի 1,8%-ի հաշվով, նայած ռանդած կշռին:

Դաբաղման երկրորդ ֆազի շերմաստիճանը հաճախ է 38—40°C, հեղուկային գործակիցը՝ 1-ի:

Դաբաղումը սկսելուց 3 ժամ հետո, հիմքայինության բարձրացման համար, տալիս են կալցիումացված սոդայի լուծույթ 0,1—0,6% և նատրիումի սուլֆիդ՝ 0,3—0,5%-ի հաշվով, նայած ռանդած կշռին, 2 անգամ, 20—30 րոպեից հետո:

Կալցիումացված սոդայի և նատրիումի սուլֆիդի լուծույթն ավելացնելուց 2 ժամ հետո նմուշը փորձում են: Պատրաստ լինելու դեպքում ողջ հեղուկը դուրս են թափում և հետագա օպերացիա-

¹ Սպիտակուցային նյութ, որը մտնում է կենդանիների շարակցական հյուսվածքների մեջ:

² Պիկելացում — կաշվի կամ մորթի կիսաֆաբրիկատի մշակումը թթվի և կերակրի աղի լուծույթով, այսպես կոչված պիկելով:

ները կատարում են միասնական մեթոդիկայի համաձայն:

Բերում ենք կաշվի մեջ պարունակվող քրոմի օքսիդի տվյալները, դաբաղման տվյալ մեթոդը արմատավորելուց առաջ և հետո (աղյուսակ 2):

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Михайлов А. Н. Химия дубильных веществ и процессов дубления, М., 1953.

Աղյուսակ 2

Աշխատանքի տեսակը	Քրոմի օքսիդի միջին պարունակությունը 1956 թ. ապրիլի մեջ %-ով	Քրոմի և օքսիդի միջին պարունակությունը 1957 թ. ապրիլի մեջ %-ով
Մեկ տարեկան հորթի կաշի և կիսակաշի	3,63	4,2
Խոզի կաշի	3,59	4,02
Կաթնակեր հորթի կաշի	3,7	4,1

Նոր արտադրանք և նյութեր

ՀԱՅԷԼԵԿՏՐԱԳՈՐԾԱՐԱՆԻ ԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՆՈՐ ՍԵՐԻԱ

Հայէլեկտրագործարանը մշակել է մեխանիկական համուղղիչով և լարման ավտոմատիկ կարգավորումով սինխրոն գեներատորների նոր սերիա:

Մեխանիկական համուղղիչի միջոցով գրգռում ստացող գեներատորների սերիայի նախագծման անհրաժեշտությունը թելադրվում էր հետևյալ պատճառներով:


Գրգռիչի առկայությունը ժամանակակից սինխրոն գեներատորը փոխարկում է երկմեքենա ագրեգատի, որը կոնստրուկտիվորեն և տեխնոլոգիապես բարդ է խոշոր սերիայի արտադրության մեջ: Փոքր և միջին կարողությունների համար գրգռիչի կշիռն ու արժեքը չափակցելի են հենց իրեն՝ ագրեգատի հետ, որը տնտեսապես ձեռնտու չէ: Գրգռիչը, հանդիսանալով հաստատուն հոսանքի գեներատոր, շահագործման ժամանակ դառնում է բոլոր վթարների և թերությունների հիմնական պատճառը (մինչև 75%):

Մեխանիկական համուղղիչով և լարման ավտոմատիկ կարգավորումով ԵՍ սինխրոն գեներատորների նոր սերիան ազատ է վերևում նշված թերություններից:

ԵՍ սերիայի գեներատորը ծառայում է որպես 50 հերց հաճախականությամբ փոփոխական հոսանքի էլեկտրաէներգիայի աղբյուր համա-

արդյունաբերական նշանակություն ունեցող ստացիոնար և փոխադրովի տեղակայումներում:

Գեներատորների աշխատանքի նոմինալ ռեժիմը երկարատև է: Գեներատորները նախատես-



Նկ. 1. ԵՍ սերիայի գեներատոր:

ված են 0,8 (եռ մնացող) կարողության գործակցի դեպքում աշխատելու համար:

Գեներատորների կայունացնող հարմարանքը